ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

# Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ..............................................................................3

Առաջադրանքների կառուցվածքային տեսակները և
պատասխանների ձևաթղթի լրացման կարգը ............................4

Թեստային առաջադրանքներում ընդգրկվող նյութը ...............10

Պատասխանների ձևաթուղթ.......................................................12

# ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դասավանդող ուսուցիչների 2024 թ. կամավոր ատեստավորման թեստի կառուցվածքը, առաջադրանքների տեսակները, պատասխանների ձևաթուղթը և ձևաթղթի լրացման կարգը, թեստային առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը և Հայոց եկեղեցու պատմության 5-11-րդ դասարանների դասագրքերը:

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստի առաջադրանքների քանակը 65 է, որից 35-ը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, իսկ 30-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքներ: Կարճ պատասխանով առաջադրանքներից 6-ը կարճ-վանդակավոր առաջադրանքներ են:

Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Թեստը ներառում է առաջադրանքներ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հանրակրթական ծրագրերով նախատեսված բոլոր թեմաներից:

Թեստի առաջադրանքների կատարման համար հատկացվում է 180 րոպե:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

### Առաջադրանքների կառուցվածքային տեսակները

Կառուցվածքային առումով թեստում ընդգրկված առաջադրանքները 2 տեսակի են՝

1) ընտրովի պատասխանով,
2) կարճ պատասխանով:

### 1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

**Ընտրովի պատասխանով առաջադրանքները ներկայացված են առաջադրանքների հետևյալ 5 տիպերով.**

1. Սկզբնաղբյուրների իմացությունը ստուգող առաջադրանքներ,

2. Պատմական տերմինների և հասկացությունների իմացությունը ստուգող առաջադրանքներ,
3. Պատմական փաստարկների, պնդումների համադրման և խմբավորման կարողությունը ստուգող առաջադրանքներ,
4. Պատմական իրադարձությունների, երևույթների պատճառների և հետևանքների իմացությունը ստուգող առաջադրանքներ,
5. Պատմական իրադարձությունների, երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացությունը ստուգող առաջադրանքներ:

**Կառուցվածքը:** Ձևակերպվում է հարցը կամ պահանջը և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

**Գնահատման չափանիշը**: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

**Ձևաթուղթը լրացնելու կարգը:** Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված են 1-4 թվերով համարակալված վանդակներ: Ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել ՙX՚ նշանը (տե՛ս նկար 1):

Օրինակ՝ եթե առաջին առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-րդն է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝

Նկար 1



## 2. Կարճ պատասխանով առաջադրանքների կառուցվածքը և ձևաթուղթը լրացնելու կարգը

**Կարճ պատասխանով առաջադրանքները ներկայացված են առաջադրանքների հետևյալ 5 տիպերով.**

1. Պատմական տերմինների և հասկացությունների իմացությունը ստուգող առաջադրանքներ,
2. Պատմական փաստարկների, պնդումների համադրման և խմբավորման կարողությունը ստուգող առաջադրանքներ,
3. Պատմական իրադարձությունների, երևույթների պատճառների և հետևանքների իմացությունը ստուգող առաջադրանքներ,
4. Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, վայրերի, ստեղծագործությունների, տեղանուն-ների կամ անձնանունների համապատասխանեցման կարողությունը ստուգող առաջադրանքներ,
5. Պատմական իրադարձությունների, երևույթների ժամանակա-գրական հաջորդականության իմացությունը ստուգող առաջադրանքներ:

**Կառուցվածքը:** Կարճ պատասխանով առաջադրանքներում հարցից կամ պահանջից հետո տրված են 7-ից մինչև 9 թվերով համարակալված պատասխաններ: Անհրաժեշտ է գտնել բոլոր ճիշտ կամ բոլոր սխալ պատասխանները: Ընդ որում՝ այս տիպի առաջադրանքները կարող են ունենալ 2, 3 կամ 4 ճիշտ պատասխան: Ճիշտ պատասխան համարվող թվերը պետք է տեղադրել ձևաթղթի համապատասխան վանդակներում:

**Գնահատման չափանիշը**: Առաջադրանքների ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր: Սխալ պարունակող կամ ոչ ամբողջական պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

**Ձևաթուղթը լրացնելու կարգը**: Կարճ պատասխանով առաջադրանքները կատարելուց հետո անհրաժեշտ է գրել

առաջադրանքի հարցին կամ պահանջին բավարարող ճիշտ պատասխանների համարները՝ հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ:

Օրինակ՝ եթե առաջադրանքի ճիշտ պատասխանները 1-ը, 3-ը և 5-ն են, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝

Նկար 2




Այս տիպի բոլոր առաջադրանքների պատասխանները խորհուրդ է տրվում գրել առաջին վանդակից սկսած և թվերի հերթականության պահպանմամբ: Ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

## Ներկառուցվածքային տարատեսակները

**ա. Ճիշտ հաջորդականության ընտրությամբ առաջադրանքներ:**

Այս առաջադրանքների մի մասը ներկայացված է հետևյալ կերպ․ հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո տրվում է 6 կամ 7 անուններից, երևույթներից կամ իրադարձություններից կազմված շարք: Ազատ վանդակներում անհրաժեշտ է լրացնել տրված անունների, երևույթների կամ իրադարձությունների համարներն այնպես, որ ստացվի ճիշտ ժամանակագրական հաջորդականություն:

**Ձևաթուղթը լրացնելու կարգը:** Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է ըստ հաջորդականության գրել ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը՝ նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ:




Նկար 3

**բ. Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, վայրերի, ստեղծագործությունների, աղբյուրներից**

**մեջբերված հատվածների, տեղանունների, անձնանունների համապատասխանեցման կարողությունը ստուգող առաջադրանքներ.**

Այս առաջադրանքներից երկուսը ներկայացվում են **կարճ-վանդակավոր պատասխան** պահանջող առաջադրանքների տեսքով: Հարցի կամ պահանջի ձևակերպումից հետո ներկայացվում են 7 բաղադրիչներից կազմված երկու շարք. առաջին շարքում բաղադրիչները համարակալված են տառերով, իսկ երկրորդ շարքում՝ զուգահեռաբար ազատ վանդակներ են: Ազատ վանդակներում պետք է լրացնել առաջին շարքի տառի բաղադրիչին համապատասխանող ճիշտ պատասխանի թիվը թիվը:

**Գնահատման չափանիշը**: Առաջադրանքների ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր: Սխալ պարունակող կամ ոչ ամբողջական պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

**Ձևաթուղթը լրացնելու կարգը:** Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է համապատասխան տառերի տակ, ըստ հաջորդականության գրել ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը՝ նախատեսված հորիզոնական վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ նիշ:

Ձևաթղթում պետք է լրացվեն միայն ընտրված համապա-տասխան թվերը՝ յուրաքանչյուր վանդակում գրելով մեկ թիվ :

Նկար 4



## Ձևաթղթում ուղղումներ կատարելու կարգը

Ձևաթղթում տրված է սխալն ուղղելու 5 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 3-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:

Եթե անհրաժեշտ է փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի սխալ նշած պատասխանը, ապա նախատեսված դաշտի վերևի հորիզոնական վանդակում կամ վանդակներում պետք է գրել առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում դնել X նշանը:

Նկար 5




Կարճ պատասխանով առաջադրանքների սխալ նշված պատասխանը փոխելու դեպքում ուղղման դաշտում հորիզոնական վանդակներում պետք է գրել առաջադրանքի համարը, որից հետո համապատասխան վանդակներում լրացնել ճիշտ պատասխանը՝ կարճ պատասխանի լրացման սկզբունքով:

Նկար 6



# ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Թեստի առաջադրանքների կազմման համար հիմք են հանդիսացել հիմնական և ավագ դպրոցների «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ծրագրերը և Հայոց եկեղեցու պատմության 5-11-րդ դասարանների դասագրքերը:

Ստորև ներկայացվում են առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները (տե՛ս Աղյուսակ 1):

## Թեստի առաջադրանքներում ընդգրկվող ծրագրային նյութը

Աղյուսակ 1.

| հ | Դասարան | Ծրագրային նյութ |
|---|---|---|
| 1 | 5-րդ դասարան | • Աստվածաշունչ մատյան<br>• Հին Կտակարան<br>• Նոր Կտակարան |
| 2 | 6-րդ դասարան | • Քրիստոնեական եկեղեցի<br>• Հայ Առաքելական եկեղեցի<br>• Հայ Առաքելական եկեղեցու խորհուրդները<br>• Հայոց եկեղեցու տոները |
| 3 | 7-րդ դասարան | • Նախաքրիստոնեական կրոններ<br>• Քրիստոնեության տարածումը<br>• Հայոց դարձը<br>• Հայոց եկեղեցու ձևավորումն ու ամրապնդումը<br>• Հայոց եկեղեցին V-IX դարերում |
| 4 | 8-րդ դասարան | • Հայոց եկեղեցին Բագրատունիների օրոք<br>• Հայոց եկեղեցին Կիլիկիայում<br>• Հայոց եկեղեցին XV-XVIII դարերում |
| 5 | 9-րդ դասարան | • Հայոց եկեղեցին XIX դարի սկզբից մինչև 1860-ական թվականները |

| | | |
|---|---|---|
| | | • Հայոց եկեղեցու կրթամշակութային գործունեությունը<br>• Հայոց եկեղեցին և ազատագրական պայքարի նոր փուլը: Պայքար ռուսացման քաղաքականության դեմ (XIX դարի վերջ XX սկիզբ)<br>• Հայոց եկեղեցին Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին<br>• Հայոց եկեղեցին խորհրդային շրջանում<br>• Վերազարթոնքի շրջան |
| 6 | 10-րդ դասարան | • Բարոյագիտություն<br>• Քրիստոնեական բարոյագիտության հիմնական հասկացությունները<br>• Հայոց եկեղեցու ծեսերն ու բարեպաշտական սովորույթները |
| 7 | 11-րդ դասարան | • Աշխարհայացք, արժեքներ<br>• Քրիստոնեական-ազգային արժեքների համակարգը<br>• Հիմնարար արժեքներ<br>• Քրիստոնեական-ազգային մշակույթը |

2024թ. Ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգում

# Պատասխանների ձևաթուղթ
## Հայոց եկեղեցու պատմություն

ազգանուն

անուն հայրանուն

ԳԹԿ անձնական համար

07

Թեստ № 1 2 3 4

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

| | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

36 ☐☐☐☐ 41 ☐☐☐☐ 46 ☐☐☐☐ 51 ☐☐☐☐ 56 ☐☐☐☐

37 ☐☐☐☐ 42 ☐☐☐☐ 47 ☐☐☐☐ 52 ☐☐☐☐ 57 ☐☐☐☐

38 ☐☐☐☐ 43 ☐☐☐☐ 48 ☐☐☐☐ 53 ☐☐☐☐ 58 ☐☐☐☐

39 ☐☐☐☐ 44 ☐☐☐☐ 49 ☐☐☐☐ 54 ☐☐☐☐ 59 ☐☐☐☐

40 ☐☐☐☐ 45 ☐☐☐☐ 50 ☐☐☐☐ 55 ☐☐☐☐

Ա Բ Գ Դ Ե Զ Է

60 ☐☐☐☐☐ 62 ☐☐☐☐☐☐ 64 ☐☐☐☐☐☐☐

61 ☐☐☐☐☐ 63 ☐☐☐☐☐☐ 65 ☐☐☐☐☐☐☐

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի ☐☐ ☐☐

1 ☐ ☐

2 ☐ ☐

3 ☐ ☐

4 ☐ ☐

Կարճ ☐☐ ☐☐☐☐

☐☐ ☐☐☐☐☐☐☐

Ա Բ Գ Դ Ե Զ Է

☐☐ ☐☐☐☐☐☐☐

*Արտագրեք այս նախադասությունը՝* *Ծանոթ եմ ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգման աշխատակարգին:*